

ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ Է ՀԵՏԵՎԵԼ ՀՀ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Կ. ՊԱՊՈՅԱՆԸ

26.08.2014թ.

Թեղենիքի կենտրոնական ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների շինհրապարակ այցելել ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Պապոյանը:

Մարզպետի տեղակալը զրուցել ասֆալտապատման աշխատանքներն իրականացնող կազմակերպության պատասխանատուների հետ, քննարկել աշխատանքների որակին ու ժամկետներին վերաբերող մի շարք հարցեր:

Համայնքի ղեկավար Մ. Բաղադասարյանն ու համայնքի բնակիչները Կ. Պապոյանին են ներկայացրել կենտրոնական ճանապարհի ասֆալտապատման կարևորությունները և անդրադարձել համայնքային կյանքում վերջինիս նշանակությանը:

Մարզպետի տեղակալը համայնքի բնակիչների հետ զրույցում անդրադարձ է կատարել նաև պետական հոգաճության արդյունքում ինչպես իրենց, այնպես էլ այլ համայնքներում կենսական նշանակության շատ խնդիրների լուծման ուղղությամբ իրականացված և ապագայում իրականացվելիք ծրագրերին: